

«Ոստիկանության նպատակը բողոքի ակցիաները կազմալուծելն է»



Բողոքի տարբեր ակցիաների մասնակցած և ոստիկանական բաժանմունքներ բերման ենթարկված ակտիվիստների դեմ հայցերը ոչ միայն սկսել են դատարանում մերժվել, այլև ոստիկանությունը կամավոր հրաժարվում է դրանցից: Ակտիվիստները բերման էին ենթարկվում ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու և վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով: Բերման էին ենթարկում առավել ակտիվներին՝ նպատակ ունենալով կազմալուծել բողոքի ակցիաները:

Ակտիվիստների շահերը ներկայացնող փաստաբան Արտակ Զեյնալյանը դատարանում մերժվող հայցերը գնահատում է ոչ հիմնավոր, իսկ ոստիկանության գործողությունները՝ ոչ իրավաչափ: Իրավաբանը համոզված է, որ ոստիկանության նպատակը խաղաղ հավաքների կասեցումն է և մասնակիցների կամքը կոտրելը:

«Ոստիկանությունը շարունակում է ծառայել ոչ թե ժողովրդին, այլ որոշակի խմբավորման շահեր է սպասարկում», - համոզված է փաստաբանը:

Այս առումով ուշագրավ է անցած տարի ՌԴ նախագահ Պուտինի Հայաստան այցի օրը՝ դեկտեմբերի 2-ին բողոքի ակցիայից բերման ենթարկված ակտիվիստների դեմ հայցերում նշված հիմնավորումները, որով ոստիկանությունը փորձում է ցույց տալ, թե անվտանգության միջոցառումներ են իրականացնում՝ «ըստ որի արգելվում է ցանկացած կասկածելի և տեսադաշտ փակող իր, հատկապես բարձրության վրա գտնվող»:

Այս համատեքստում է հիմնավորված դեկտեմբերի 2-ին բողոքի ակցիայից բերման ենթարկված ակտիվիստ Զարուհի Հովհաննիսյանի հայցը. «...Զարուհի Հովհաննիսյանը մի քանի այլ քաղաքացիների հետ փորձել է վերգետնյա անցումից ներքև կախել 8 մետր երկարությամբ և 80սմ լայնությամբ պաստառ՝ «Մերժի պապան ա եկել» գրառմամբ: Ոստիկանները ակտիվիստներին պահանջել են «դադարեցնել հակաօրինական վարքագիծը և լքել տարածքը, սակայն ակտիվիստը չի ենթարկվել»:

Փաստաբան Տիգրան Սաֆարյանն, ով հակընդդեմ հայցերով դիմել է դատարան, նշել է այն դեպքերը, երբ օրենքը սահմանում է իրավունքների սահմանափակումների շրջանակները:

Թեև օրենսդրին լիազորել է օրենքով տալ իրավունքները սահմանափակող իրավակարգավորումներ, սակայն սահմանել է ևս մեկ երաշխիք՝ որպեսզի այդ սահմանափակումները չգերազանցեն Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները: Իսկ այդ իրավունքների խախտման դեպքում՝ ապահովել դրանց դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Միննույն ժամանակ, Սահմանադրությունը սահմանել է, որ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և

ազատությունները և, որ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

«Նույնիսկ ոստիկանության կողմից ներկայացված հայցադիմումի շարադրանքում տեղ գտած փաստերն ինքնին հաստատում են ոստիկանների կողմից մեր Վստահորդի իրավունքների իրացմանը միջամտելու ոչ իրավաչափ լինելը»։ պատասխան հայցում արձանագրել է Սաֆարյանը՝ նշելով ոստիկանների կողմից թույլ տրված բոլոր խախտումները, - ոստիկանները թույլ չեն տվել մեր վստահորդին իրացնել իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը՝ արգելելով պաստառ փակցնելը և պահանջելով ապամոնտաժել այն, չեն ներկայացրել իրավական հիմքերը, չեն պարզաբանել գործողությունների հակաիրավական լինելու որևէ իրավական հիմք, թե ինչու՞ իրեն թույլ չեն տալիս ազատ արտահայտել իր կարծիքը, ազատ տեղաշարժվել, որին ոստիկանները պատասխանել են, որ նա վարչական իրավախախտում է կատարել, չի ապահովվել պաշտպան ունենալու նրա իրավունքը»:

Պատասխան հայցում փաստաբանի կողմից նշվել են ոստիկանության կողմից թույլ տրված բազմաթիվ խախտումներ, որոնք հասնում են արսուրդի աստիճանի. « Նույն օրը նմանատիպ արարք կատարելու համար ոստիկանության Շենգավիթի բաժին բերման ենթարկվածներ Հայկ Սահակյանի և Արթուր Ավթանդիլյանի վերաբերյալ գործը ոստիկանության կողմից կարճվել է, մինչդեռ մեր վստահորդին վարչական պատասխանատվության ենթարկելու հայց է ներկայացվել Վարչական դատարան», նշել է փաստաբան Սաֆարյանը՝ եզրակացնելով,- ոստիկանների գործողությունները սահմանված չեն եղել օրենքով, հետևաբար դրանք ոչ իրավաչափ են:»

Զարուհի Հովհաննիսյանը և մյուս ակտիվիստները բացառում են իրենց կողմից օրենքի որևէ խախտում՝ նշելով, որ ոչ մի տեղ գրված չէ, թե անձը չի կարող իր բողոքն արտահայտել՝ վերգետնյա անցումների վրա պաստառներ փակցնելով: Ակտիվիստները լավ գիտեն իրենց իրավունքները: Դեկտեմբերի 2-ին Պուտինի այցի դեմ բողոքի ակցիայի բերման ենթարկված ակտիվիստների թիվը 100-ից ավելի էր:

«Մինչև մաքսայինի գործընթացի սկիզբը ոստիկանության շարքերում ինչ-որ չափով զսպվածություն կար, սակայն սեպտեմբերի 3-ից հետո եթե ուշադիր նայենք, պատկերը կտրուկ փոխվում է: Ոստիկանների գործելաճը շատ ավելի կոպիտ ու անհանդուրժող է դառնում, դրա վառ օրինակն է դեկտեմբերի 2-ի ակցիան իր հարյուրավոր ձերբակալվածներով»:

Ոստիկանության կողմից հայցերից հրաժարվելու փաստը ակտիվիստները բացատրում են դատական գործընթացում մեղադրանքի հիմնավորման անկարողությունը, ինչպես նաև այն հանգամանքով, որ նման ռեպրեսիաների արդյունքում, եթե դատական պրոցեսները շարունակվեն և տուգանքներ նշանակվեն, բողոքի աննախադեպ ալիքի կարող է բարձրանալ:

Ժաննա Ալեքսանյան

http://www.forrights.am/?ln=1&id =20&page_id=60